ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 850-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

850-տկան թվականների սկզբներին Վասպուրականը ծանր իրավիճակում էր։ Հայաստան ներխուժած Բուղա զորապետին հաջողվել էր դրավել նաև Վասպուրականը, գերել գահերեց իշխան Աշոտ Արծրունուն, նրա եղբորը՝ Գուրգենին և ուրիշ իշխանների։ Սակայն Վասպուրականի զինական ուժերը, որոնք հիմնականում քաշվել էին Կորճայքի Որսիրանք գավառը, չհանձնվեցին Բուղային և իրենց հրամանատար Գուրգենի գերեվարումից հետո վերադարձան Վասպուրական ու ցրվեցին։

Այսպիսով, նախարարների ուժերը չլատվեցին և նրանք ստիպված եղան մտնել իրենց ամրոցներն ու սպասել դեպքերի զարգացմանը[1]։ Դրա հետևանքով նրանք ի վիճակի չեղան խոչընդոտելու արաբ գաղթականների հաստատմանը Վասպուրականում, որոնք «սկսան այնուհետև աներկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգին տաճկաց, որ ելեալ էին զհետ նորա ընտանեօք իւրեանց, և ձեռնամուխ եղեն բաժանել զերկիրն յինքեանս. և արկանէին վիճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց...»[2]։ Միաժամանակ Վասպուրականի աշխատունակ բնակչության զգալի մասը դերվեց և ստրկության վաճառվեց։ Հայ իշխանների մի մասը հանձնվեց Բուղային կամ համագործակցեց նրա հետ։ Նրանց նկատմամբ կիրառվում էր նաև բռնի հավատափոխության քաղաքականություն, որը նոր չէր և բխում էր ոչ այնքան մահմեդականության սկզբունքներից (վերջինս թույլ էր տալիս այլադավան իշխանների գոյությունը մահմեդական պետության մեջ[3]), որքան Արբասյանների որդեգրած բռնության քաղաքականությունից։ Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, թե Բուղան խալիֆայից հրահանգ ուներ հայ իշխաններին գերեվարել, իսկ «զայլ ես ռամիկ հեծելազօրս, որ սուր յազդեր ունել մարթացեալ և կամ զզէն շարժել զամենեսին սատակեսցէ։ Բայց միայն թէ ի լաւագունից ոմանց ի պաշտօն օրինացն Մահմէտի ոք դարձցի՝ զնոսա ընդ իւր տարցի»[4]։ Հավատափոխ չլինողը սպանվում էր, որքան էլ սերտ կապեր ունենար Բուղայի կամ ուրիշ արաբ պաշտոնյաների հետ[5]։ Ստեղծված պայմաններում փրկություն տրվում էր միայն հավատուրացության գնով[6]։

---

1 «Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 250։

2 Նույն տեղում, էջ 251։

3 Baladhuri, The origins of the islamic state (Kitab Fatuh al-Buldan), vol. I New-York, 1916, p. 191.

4 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 118։

5 Նույն տեղում, էջ 123—124, Թովմա Արծրունի, էջ 234, 280, «Մայր ցուցակ սրբոց Հակոբյանց», հ. 1, Երուսաղեմ, 1966, էջ 28։

6 «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 93։

Վասպուրականի նախարարները գտնում էին, որ խալիֆայի հանդեպ ոչ մի հանցանք չեն գործել և վերջինիս զորքի հետ ընդհարվել են միայն Բուղայի կամ նրա նախորդների նենգ ու թշնամական վերաբերմունքի պատճառով։ Այլ ճանապարհ չունենալով՝ Վասպուրականի նախարարները դիմակայում էին վերջիններիս և միաժամանակ գտնում, որ երկրի իրական տերերն իրենք են և որ պետք է դիմադրեն կամ զրկվեն իրենց իրավունքներից ու ոչնչանան։ Այս է պատճառը, որ նույնիսկ դատավարության ժամանակ Վասպուրականի գերված նախարարները նույն համոզմունքը հայտնեցին. «մեք ոչ եմք ապստամբք ի քումմէ ինքնակալ թագաւորութենէդ», ուստի իրենց հետ չպետք է վարվեն «իբրև ընդ համհարզս և ընդ ստամբակս, իբրև ընդ աննշանս կամ ընդ անընդել վայրագս»։ Սակայն խալիֆան հայտարարեց, որ հայ իշխանների ժառանգական իրավունքները կճանաչի միայն նրանց հավատափոխության պայմանով[8] և առաջ քաշեց հետևյալ մեղադրանքները. նախարարները չեն ճանաչել իր գերիշխանությունը, պատերազմել են իր դեմ, հասցրել վնասներ, հրաժարվել են հարկատվությունից[9]։ Նախարարներն այլ ելք չունենալով՝ ստիպված եղան առերես հավատափոխ լինել։ Առաջինը հավատափոխ եղավ Հայոց իշխան Բագարատ Բագրատունին[10], որին հետևեցին մյուսները, բացառությամբ Սմբատ սպարապետի, Գրիգոր Արծրունու և ուրիշների, որոնք նահատակվեցին։ Վասպուրականի նախարարներից միայն Վասակ Արծրունին կամովին ուրացավ հավատը[11], ուստի հիշվում է «դենադարձ», «ամբարիշտ» մականուններով։

Սակայն Հայաստանից բոլոր նախարարները չէ, որ տարվեցին գերության։ Նրանց մեծ մասը հնազանդվեց Բուղային, որը ձմեռելու մեկնելով Դվին՝ «արձակեաց զզօրսն իւրաքանչիւր զօրագլխօք եկելոց առ նա յամենայն ազգաց յաշխարհէս Հայոց՝ երթալ ձմերել յիւրաքանչիւր տեղիս բնակութեանց», միաժամանակ հրամայելով, որ գարնանամուտին գան իր մոտ՝ «ամենայն պատրաստութեամբ»[12]։ Այս հաղորդումից պետք է մակաբերել, որ Բուղան մտադիր էր հնազանդված հայ իշխանների զորքն օգտագործել Կովկասի նորանվաճ բնակավայրերում որպես կայազոր տեղակայելու կամ մարտադաշտ տանելու համար[13] (Տփղիսում հիշվում է խութեցիներից կազմված պահակազոր[14])։ Այս տեսակետից ուշագրավ է այն, որ Քթիշ ամրոցի տեր Եսայի Ապումուսեի դեմ կռվելիս Բուղային աջակցեցին Սմբատ սպարապետը և իր որդին։ Բացի այդ, հետագայում, երբ Բուղայի զորապետ Բուտելը հարձակվեց Վասպուրականի իշխանապետ Գուրգեն Ապուպելճի վրա, նրան օգնեցին Վասպուրականի որոշ իշխաններ, որոնք մինչ այդ հարել էին խալիֆայությանը։ Սակայն Վասպուրականի ազատանու մեծ մասը կարողացավ հեռու մնալ Բուղայի լարած որոգայթներից, ուստի երբ վերջինս Եսայի Ապումուսեին գերե-

---

7 Թովմա Արծրունի, էջ 255։
8 Նույն տեղում, էջ 256։
9 Նույն տեղում։
10 Նույն տեղում, էջ 260։
11 Նույն տեղում, էջ 261։
12 Նույն տեղում, էջ 275—276։
13 J. Laurent, L'Armenie entre Byzance et L'islam, Paris, 1919, p. 119—120.
14 J. Markwart, Osteuropäische und ostasiatische Streifüge, Leipzig, 1903, S. 460.

լուց հետո վերստին աքսորեց Հայաստանի նախարարներին, ապա նրանց մեջ Վասպուրականի իշխաններն այլևս չեն հիշվում[15]։ Սա հետևանք էր այն բանի, որ վերջիններս մնացել էին աննվաճ և Բուղայի հետ չէին համագործակցում։

Վասպուրականի գահերեց իշխան Աշոտ Արծրունուն և նրա եղբորը ձերբակալելուց հետո Բուղան համոզված էր, թե նահանգի իշխանների քաղաքական կողմնորոշումն արմատապես փոխվել է հօգուտ խալիֆայության, ուստի Վասպուրականի կառավարումը հանձնեց իր գրածո Իբրահիմ ամիրային, որին Թովմա Արծրունին հորջորջում է «Հայոց հազարապետ», «Իբրահիմ ոմն»։ Պատմիչի հաղորդումից երևում է, որ վերջինիս նստավայրը Նախճավանն էր[16]։ Իբրահիմը հավանորեն Բուղայի բացակայության ժամանակ եղել է Արմինիայի ոստիկանի փոխանորդը[17], որը այլ աղբյուրից հայտնի չէ[18]։ Սակայն Իբրահիմը Վասպուրականում չէր կարող ունենալ հաստատուն հենարան և իշխանություն, քանի որ տեղի ազատազորքը Կորճայքից վերադարձել էր հայրենի գավառները։ Այսպիսով՝ Վասպուրականը չնայած կորցրել էր իր իշխանապետությունը, սակայն պահպանել էր զինական ուժերը, որոնք պատեհ պարագաներում կվերականգնեին նահանգի ինքնուրույնությունը։ «Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք Արծրունեաց ըստ ազգս ազգս...»[19],— գրում է Թովմա Արծրունին։ Արծրունիների տոհմը ներկայացնում էին չորս ճյուղեր, որոնց գլխավորում էին Ապուչափրը, Ապումկդեմը, Վասակ Կովակերը և Գուրգեն Ապուպելճը։ Սրանք Արծրունիների տոհմի երկրորդական ճյուղերի ներկայացուցիչներն էին, և իհարկե, ունեին իրենց ստորադրյալ ազատներն ու զորքը։ Արծրունիների իշխող ճյուղի անդամների բացակայությունն առիթ դարձավ, որպեսզի վերոհիշյալ չորս ճյուղերի պարագլուխները պայքարեն առաջնության համար։ Նրանք, գրում է պատմիչը, «ճեղքեցան ի միմեանց և զօրս գումարեցին ի զերծելոցն ի սրոյն և ի գերութենն Բուխայի»[20]։ Այս ժամանակաշրջանում Վասպուրականում գործում էին երեք խմբավորումներ, որոնք պայքարի մեջ էին միմյանց հետ և առաջադրում էին նահանգի գահերեց իշխանի իրենց թեկնածուն։ Իշխանների առաջին խմբավորումն առաջ էր քաշում Գուրգեն Ապուպելճի թեկնածությունը, որն անցել էր Բյուզանդիա և խալիֆայության հանդեպ ուներ դիմադիր կողմնորոշում։ Երկրորդ խմբավորումն առաջադրում էր Ապումկդեմ Արծրունուն, երրորդը՝ Վասակ Կովակերին, իսկ Ապուչափրը Արծրունու գլխավորած իշխանները հարում էին երկրորդ խմբավորմանը։

Այս պայքարի հետևանքով Վասպուրականում ստեղծվել էր խռովահույզ իրավիճակ[21]։ Նախքան Գուրգեն Ապուպելճի վերադարձը, Վասպուրականի իշխանների զգալի մասը համախմբվեց Ապումկդեմ Արծրունու շուրջը և նրան ճանաչեց նահանգի գահերեց իշխան։ Սակայն վերջինիս իշխանությունը Ար-

---

15 Թովմա Արծրունի, էջ 310։

16 Նույն տեղում, էջ 311, 317։

17 Հմմտ. H. Thoptschian, Die inneren Zustände von Armenien unter Aschot I. Berlin, 1904, S. 22.

18 Հմմտ. Հ. Նալբանդյան, Արաբացի ոստիկանները Հայաստանում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 8, էջ 122)։

19 Թովմա Արծրունի, էջ 311։

20 Նույն տեղում, էջ 312։

21 Նույն տեղում, էջ 312—313։

մինիայի ոստիկանը չճանաչեց, ուստի հայ իշխաններին մնում էր զենքի ուժով պահպանել իրենց իրավունքները։ Մյուս կողմից, Սմբատ Բագրատունին, որը որպես Հայաստանի սպարապետ կարողացել էր շահել Արմինիայի ոստիկանի վստահությունը և իրեն պատասխանատու էր համարում Հայաստանում խալիֆայության դեմ նախաձեռնած ամեն մի արարքի համար, Վասպուրականի իշխանների ձեռնարկած քայլերի մասին հայտնեց Իբրահիմ ամիրային[22]։ Վերջինս Բերկրիի ութմանիկների աջակցությամբ հարձակվեց Վասպուրականի վրա։ Խոզաղբերք գյուղի[23] մոտ տեղի ունեցած մարտում սկզբում հաղթում էին վասպուրականցիները։ Սակայն Ապումկդեմ Արծրունու զոհվելը բեկում մտցրեց մարտում՝ հօգուտ թշնամու, որին այնուհետև հաջողվեց ներխուժել Վանա լճի հարավ-արևելյան շրջանները, ասպատակել Ռշտունյաց գավառը և դրավել Ոստանի անառիկ ամրոցը։ Դրանից հետո Իբրահիմը վերադարձավ Նախճավան[24]։

Վասպուրականի իշխանները դրանից հետո էլ Ապուշափը Արծրունու գլխավորությամբ շարունակեցին պայքարը՝ հանուն ինքնավարության։ Ապուշափը Արծրունու առաջնորդությամբ Վասպուրականի աղատազորքն անցավ Արծրունիների ոստանը՝ Մեծ Աղբակ գավառը՝ համալրվելու և գործողության ծրագիր մշակելու համար։ Այստեղ «ժողովեցան առ նա գունդք գունդ յամենայն կողմանց»[25]։ Իբրահիմ ամիրան թեև անցել էր Նախճավան, սակայն Ոստանում թողել էր զորք, որի առկայությունը դժվարացնում էր Վասպուրականում հայկական իշխանության վերահաստատումը։ Ոստանում զորաջոկատ տեղակայելով, Իբրահիմը կամենում էր երկու կողմից աքցանի մեջ պահել Վասպուրականը, որի մի կողմում Ոստանի կայազորն էր՝ միացած Խլաթի և Բերկրիի ամիրայություններին, մյուս կողմում՝ Նախճավանում տեղավորված իր զորքը։ Անհրաժեշտության դեպքում սրանք կարող էին միավորել իրենց ուժերը։ Տեղակայված լինելով Վանա լճի հարավային, հյուսիս-արևմտյան և արևելյան կողմերում, նրանք հսկողության տակ էին պահում կարևոր ռազմուղիները։ Այդ աքցանը վերացնելու նպատակով վասպուրականցիներն առաջին հերթին գրավեցին ամուր հենակետ Ոստանի ամրոցը։ Այնուհետև նրանք իրենց իշխանապետ կարգեցին Վասակ Կովակերին[26]։ Հավանաբար Ոստանի վրա հարձակում գործելուն Ապուշափը և իր հետևորդները դեմ են եղել։ Թովմա Արծրունին այս մասին ողղակի չի գրում, բայց նրա այն խոսքերը, թե Ապուշափը հեռացել է Աղբակ (մինչև Ոստանի գրավումը), կոահել են տալիս, որ Ոստանի գրավումը կատարվել է ոչ թե նրա նախաձեռնությամբ, այլ՝ Վասակ Կովակերի և իր համախոհների։

Սմբատ սպարապետը (որին հաճախ սխալմամբ նույնացրել են Մոկաց իշխան Սմբատի հետ) Վասպուրականում սկսված շարժումը թուլացնելու միտումով Բյուզանդիայից վերադարձած Գուրգեն Ապուպելճին հանեց Վասակ Կովակերի դեմ։ Թովմա Արծրունու վկայությունից («փութանակի եկն եհաս յաշխարհս Վասպուրական սպարապետին կամակցությամբ»)[27] երևում է, որ

22 Նույն տեղում, էջ 317։
23 Գտնվում է Վասպուրականի Աղիովիտ գավառում։
24 Թովմա Արծրունի, էջ 319։
25 Նույն տեղում։
26 Նույն տեղում։
27 Նույն տեղում։

Գուրգեն Ապուպելճը Վասպուրական է վերադարձել հենց Սմբատ Սպարապետի հրավերով։ Սմբատի նպատակը չէր, անշուշտ, հակաարաբական նոր շարժում առաջացնել։ Նա գիտակցում էր, որ Վասպուրականում ինքնուրույն իշխանության գոյությունն արդեն փաստ է։ Առանձին կարևորություն էր ստանում այն հանգամանքը, թե այդ իշխանությունը քաղաքական ինչպիսի ընթացք կունենա։ Սմբատը գործում էր Բուղայի թելագրությամբ, իսկ վերջինս տեղյակ էր, թե բյուզանդական կողմում ինչպիսի փառք է վաստակել Գուրգեն Ապուպելճը։ Այդպիսի շնորհալի զորապետին արաբների կողմը գրավելն անշուշտ զգալի չափով կօժանդակեր Բյուզանդիայի դեմ մղվող պայքարին։ Ուստի երբ Բուղան տեղեկացավ Գուրգեն Ապուպելճի վերադարձի մասին, Սմբատին հրամայեց «զի աներկիւղ կացցէ մնասցէ Գուրգէն առ սպարապետին մեծաւ շնորհակալիւք»[28]։ Հետևաբար, հրավիրելով Գուրգեն Ապուպելճին, Սմբատը հույս ուներ նրա միջոցով նախ Վասպուրականում ստեղծել այնպիսի իշխանություն, որը պետք է ճանաչեր ոչ միայն Բուղայի, այլև իր գերիշխանությունը։ Սակայն Գուրգեն Ապուպելճը բոլորովին այլ ուղիով գնաց։ Շրջահայաց կերպով օգտագործելով Բուղայի և Սմբատի վստահությունը, նա Վասակ Կովակերից խլեց «զզօրաւարութիւն բոլոր Վասպուրական տերութեանս»[29]։ Գուրգեն Ապուպելճը գիտակցում էր, որ Վասպուրականում լիիշխան տեր լինելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր այնտեղից վերացնել Բուղայի ասպատակությունների հետևանքները, հատկապես արաբ գաղթականությանը, քանի որ միասեռ ազգագրական միջավայրի պայմաններում էր միայն հնարավոր պահպանել նահանգի հայկական իշխանությունը։ Գուրգեն Ապուպելճը հավատարիմ զորայինների օգնությամբ գրավեց Ջլմար և Սրինգ ամրոցները, որպեսզի Կորճայքի կողմից ապահովի Վասպուրականի անվտանգությունը մահմեդականների հարձակումներից և միաժամանակ հաստատուն դարձնի իր իշխանությունը։ Այնուհետև նա «եբարձ զամենայն ազգս Տաճկաց, որ բնակեալ էին Վասպուրական տէրութեան»[30]։ Գուրգեն Ապուպելճի այս գործողությունները, բնականաբար, թշնամանք ստեղծեցին նրա և Բուղայի ու վերջինիս դրածոների միջև, քանի որ ի չիք դարձվեցին Բուղայի նվաճումները Վասպուրականում։ Անշուշտ, այս գործողությունների հաջողությանը մեծապես նպաստեց նաև Բուղայի կլանվածությունը ծանարների դեմ մղված կռիվներով։ Նա նույնիսկ ի վիճակի չեղավ զորքը անձամբ հարձակման տանել Վասպուրականի դեմ և այդ հանձնարարեց իր զորապետ Բուտելին, որին դաշնակցում էին Բերկրիի ութմանիկները։ Բուտելին հաջողվեց թափանցել Վասպուրական և նույնիսկ հասնել մինչև Հայոց ձոր։ Այսպիսով՝ Վասպուրականի իշխանության գլխին լուրջ սպառնալիք կախվեց։ Դրությունը բարդանում էր նաև նրանով, որ Վասպուրականի իշխանների մի մասը թշնամական դիրք ուներ Գուրգեն Ապուպելճի նկատմամբ[31] և հարևան ամիրայությունների հետ դաշնակցած կարող էր հարձակ-

---

28 Նույն տեղում, էջ 317։

29 Նույն տեղում, էջ 319։ Ժ. Լորանի կարծիքով՝ Գուրգենը Սմբատի մոտ է եկել հույների դեմ տարած հաղթանակներից հետո, հուսալով, թե դրանց պատճառով արաբները մոռացության կտան իր՝ նրանց հասցրած վնասները (J. Laurent, Un feodal Armenien au IXe siecle: Gourgen Ardzrouni fils D'Abou Beldj. Etudes D'Histoire Armenienne, Louvain, 1971, p. 32).

30 Թովմա Արծրունի, էջ 319։

31 Նույն տեղում, էջ 319—320։

վել նրա վրա։ Երվանդունիք գավառի արևելյան սահմանագլխին՝ Որդոք գյուղում, հակառակորդը հանկարծակի հարձակվեց Գուրգեն Ապուպելճի զորքի վրա (Թովմա Արծրունին նրա ուժերը հաշվում է 400, իսկ հակառակորդինը՝ 2000 դինվոր)։ Չնայած թշնամու քանակական գերակշռությանը, Գուրգեն Ապուպելճի զորքը կարողացավ հաղթանակ տանել և նահանգն ազատագրել[32]։ Այդ հաղթանակից հետո էլ Վասպուրականի զորքը ստիպված եղավ անընդմեջ բախվել նահանգում բնակություն հաստատած մահմեդական ցեղերի հետ, որոնք որպես նվաճողներ, ընդունված կարգի համաձայն[33], կարող էին ժառանգաբար տիրել իրենց հատկացված հողերին։ Գուրգեն Ապուպելճի դրությունը բարդանում է նաև նրանով, որ որոշ խոռվարար ուժեր, դրժելով տված երդումը, սկսում են դիմակայել նրան։ Բացի «բազում հինիցն եկելոց ի վերայ Գուրգինի,— գրում է պատմիչը,— ...բազում այն էր, որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուղէին աղմուկք»[34]։ Սակայն Գուրգեն Ապուպելճին հաջողվում է նրանց ևս զրոպել, և Բուղան ստիպված է լինում ճանաչել Գուրգեն Ապուպելճի իշխանությունը, նրան ուղարկելով իշխանական զգեստներ և «կացոյց զնա իշխան յիւրում հաւատարիմ տեզուոջ»[35]։

Գուրգեն Ապուպելճի նկատմամբ Բուղայի նմանօրինակ վերաբերմունքն անշուշտ ուներ նաև այլ դրդապատճառներ։ Նա դրանով կամենում էր թիկունքն ապահովել և բացառել այնտեղ թշնամական ուժի գոյության հնարավորությունը։ Բանն այն է, որ Բյուզանդիան սկսել էր ակտիվ քաղաքականություն վարել Փոքր Ասիայի արևելքում[36]։ Հետևաբար Հայկական բարձրավանդակը և նրա կարևոր հատվածը՝ Վասպուրականը, ստանում էին հույժ կարևոր նշանակություն։ Այնտեղով էր անցնում Արևելքն Արևմուտքի հետ կապող մայրուղու հարավային ճյուղավորումը, որը բյուզանդացիների ձեռքն ընկնելու դեպքում նրանց հսկողության տակ կդներ Փոքր Ասիայի արևելյան ուղիները։ Մյուս կողմից՝ Վասպուրականի իշխանության համար դրական նշանակություն ունեցավ նաև նրա ճանաչումը Արմինիայի կառավարիչ Բուղայի կողմից։ Քանի դեռ վերջինս Գուրգեն Ապուպելճին չէր ճանաչել Վասպուրականի իշխան, երկիրը, ինչպես տեսանք, ենթակա էր ներքին ու արտաքին թշնամիների հարձակումներին։ Սակայն ճանաչումից հետո, ինչպես երևում է Թովմա Արծրունու վկայությունից, այդ հարձակումները գրեթե դադարել են[37], քանի որ Վասպուրականի իշխանությանը թշնամի ուժերը համակերպվել են ստեղծված կացության հետ։ Բնականաբար, հիշյալ հարձակումները կատարվում էին Բուղայի կամ նրա ստորադրյալների կամակցությամբ և հետևաբար այժմ, երբ վերջիններս փոխել էին իրենց վերաբերմունքը Գուրգեն Ապուպելճի նկատմամբ, Վասպուրականի դեմ եղած թշնամանքը պետք է մեղմանար։ Այս ի նկատի ունի Թովմա Արծրունին, երբ գրում է, թե Գուրգեն Ապուպելճի իշխա-

---

32 Նույն տեղում, էջ 320։

33 Abou Youssouf Yakoub, le Livre de l'impot foncier (Kitab el-Kharadj), Paris, 1921, p. 141.

34 Թովմա Արծրունի, էջ 321։

35 Նույն տեղում, էջ 322։

36 А. Васильев, Политические отношения Византии и Арабов за время Аморинской династии, СПб., Петербург, 1900, стр. 161.

37 Թովմա Արծրունի, էջ 321։

նության ճանաչումից հետո այլևս «ներքին և արտաքին յարձակմունքն ոչ կտրէին ի ներքս դիմել մարտնչել ընդ անյաղթ զօրութեան զօրացելոյն ի Քրիստոսէ»[38]։ Ուշագրավ է, որ Բուղան ոչ թե Գուրգենին հրավիրել է իր մոտ. ինչպես արվում էր սովորաբար, այլ իշխանական զգեստներն է ուղարկել։ Այս հանգամանքը ևս վկայում է, որ նա ոչ թե թելադրողի, այլ համակերպվողի գերում էր։ Մյուս կողմից այն փաստը, որ Գուրգենն ընդունել է Բուղայի ուղարկած իշխանական զգեստները, ցույց է տալիս, որ նա խոհեմաբար ճանաչել է արաբ փոխարքայի գերիշխանությունը և երկիրն ապահովել նորանոր արհավիրքներից։ Որոշակի դեր է խաղացել նաև Սմբատ Բագրատունու միջամտությունը, որը հատկապես էական կարող էր լինել այն պահին, երբ Բուղան կատաղի մարտեր էր մղում Կովկասի լեռնականների դեմ։ Թե՛ Բուղան և թե՛ Սմբատը գիտակցում էին, որ Վասպուրականի իշխաններին թուլացնելու լավագույն միջոցը նրանց միմյանց դեմ կռվեցնելն է։ Ուստի իմանալով հանդերձ, որ Գուրգեն Ապուպելճը պայքարել է ոչ միայն Բյուզանդիայի, այլև խալիֆայի դեմ, ստիպված էին նրան ճանաչել Վասպուրականի իրավատեր։ Հավանորեն հենց Սմբատ Բագրատունու միջոցով էր, որ Բուղան ճանաչեց Գուրգեն Ապուպելճի իշխանությունը։ Ժ. Լորանի կարծիքով՝ Սմբատը դրանով կամեցել է, եթե պահանջեին հանդամանքները, Գուրգեն Ապուպելճին օգտագործել ընդդեմ խալիֆայության, քանի որ իբր «Բյուզանդիայի և Գուրգենի հարաբերությունները շատ լավ էին և ուրիշ ոչ ոք չէր կարող այնտեղից օգնություն ստանալ»[39]։ Նրա կարծիքով՝ Գուրգեն Ապուպելճի իշխան կարգվելը հետևանք էր նաև նրա հավատուրացության[40]։ Այս տեսակետը ճիշտ չէ, քանի որ երբ հետագայում (արդեն Սմբատի որդու՝ Աշոտի օրոք) Տփղիսի ամիրան ձերբակալեց Գուրգեն Ապուպելճին և ստիպեց ուրանալ հավատը, նա հրաժարվեց, բայց ոչ թե սպանվեց, այլ բանտարկվեց[41]։ Եթե նա հավատն ուրացած է եղել, ուրեմն նորից քրիստոնյա է դարձել։ Մահմեդական օրենքի համաձայն նա պիտի պատժվեր մահվամբ, այնինչ միայն բանտարկվեց։ Իրականում Սմբատն առաջնորդվում էր բոլորովին այլ շարժառիթներով։ Որպես արաբների վստահությունը վայելող անձ, նա մտահոգվում էր երկրում ծայր առած հակաարաբական խմորումներով։ Վասպուրականի հակաարաբական շարժումը փաստ էր և տվյալ պահին այն ճնշել չէին կարող ո՛չ Սմբատը և ո՛չ էլ Բուղան։ Վերջինիս վրա որոշակի ազդեցություն ունեցող Սմբատը[12] կարող էր հուշել, որ Վասպուրականի հանդեպ անզիջում դիրք բռնելը կնշանակեր նոր թշնամանք սերմանել արդեն նվաճած երկրամասում և կորցնել այն։ Ճանաչելով Գուրգեն Ապուպելճի իշխանությունը, Բուղան կարող էր տպավորություն ստեղծել, թե իբր Հայաստանը լիովին հնազանդվել է իրեն։

Սմբատը նաև գիտակցում էր, որ Գուրգեն Ապուպելճը Արծրունիների իշխող ճյուղից չէ և, հետևաբար, չնայած Վասպուրականին տիրելուն, ոչ միայն չէր կարող երկարատև ու լուրջ վտանգ ստեղծել Բագրատունիների համար, այլև կթուլացներ Բագրատունիների լուրջ մրցակից Արծրունիների հիմնական ճյու-

---

38 Նույն տեղում, էջ 322։

39 J. Laurent, Etudes D'Histoire Armenienne. p. 33.

40 Նույն տեղում, էջ 36։

41 Թովմա Արծրունի, էջ 330—331։

42 Նույն տեղում, էջ 295—296։

ղին։ Պատահական չէ, որ խալիֆայությունում որոշ ժամանակ հետո հակված էին նույնիսկ Արմինիայի կառավարչի պատիվը վերապահել Արծրունիներին[43]։ Սմբատը դիտեր, որ Բշնամանք կար Արծրունիների իշխող ճյուղի և Գուրգեն Ապուպելճի միջև, որի հայրը սպանվել էր այդ ճյուղի դեմ մղված կռիվներից մեկում[44]։ Ուստի Գուրգեն Ապուպելճի գործունեությունը պետք է նպաստեր Բագրատունիների ազդեցության ուժեղացմանը և Արծրունիների թուլացմանը։ Այս ամենի հետ միասին Վասպուրականի իշխան ճանաչվելու գործում մեծ դեր խաղացին նաև Գուրգեն Ապուպելճի անձնական հատկանիշները՝ քաջությունը, տոկունությունը և ձեռներեցությունը։

Վերադառնալով Սամառա, Բուղան գերության տարավ Հայաստանի գրեթե բոլոր նշանավոր իշխաններին, որոնց թվում նաև Սմբատ սպարապետին։ Հյուսիսային Հայաստանում մնաց վերջինիս որդի Աշոտը, իսկ հարավայինում՝ Գուրգեն Ապուպելճը։ 856 թ. Բյուզանդիայի և խալիֆայության միջև վերսկսված պատերազմը շեղեց վերջինիս ուշադրությունը Հայաստանից։ Մուտավաքիլ խալիֆան այստեղից հանեց իր զորքերը և ուղարկեց Բյուզանդիայի դեմ, որը հաջող հարձակումներ էր ձեռնարկել Եփրատի կողմից[45]։ Դեպի Արևելք առաջխաղացող Բյուզանդիային հայերի միանալը կանխելու, նույնիսկ, եթե հնարավոր լիներ, նրանց Բյուզանդիայի դեմ հանելու միտումով խալիֆան ներում շնորհեց նաև Արծրունի գերեվարված իշխաններին, որոնց վերադարձը գերությունից չէր կարող նոր սպառնալիք լինել խալիֆայության համար, քանի որ Վասպուրականն անկախություն էր վայելում։ Մյուս կողմից՝ խալիֆան Հայաստան ուղարկելով հայ իշխաններին, կամենում էր թուլացնել տեղի անհնազանդ արաբ ամիրաներին։ Բացի այդ, Վասպուրականի իշխանների վերադարձը թուլացնելու էր նաև հայերի ուժերը՝ առաջացնելով միջիշխանական գժտություններ։ Խալիֆան դրանով նաև հույս ուներ հայերին օգտագործել Կովկասի ժողովուրդների դեմ, մանավանդ որ իշխանների գերեդարձության հենց նախօրյակին Բյուզանդիայի աջակցությամբ վրաց և արխազաց զորամասերով Վասպուրական վերադարձավ Աշոտ Արծրունու եղբայր Գրիգորը[46], որը լինելով Արծրունիների իշխող ճյուղի անդամը, հավակնում էր դառնալ Վասպուրականի գահերեց իշխան։ Սակայն նրան իր հետ բերած զորամասերը լքեցին և նա ստիպված եղավ հրաժարվել իշխանությանը բռնի տիրանալու մտադրությունից ու Գուրգեն Ապուպելճի հետ խաղաղ բանակցություններ սկսել։ Երկուստեք համաձայնությամբ նրանք Վասպուրականը բաժանեցին միմյանց միջև։ Թովմա Արծրունին չի գրում, թե նրանցից յուրաքանչյուրը Վասպուրականի որ մասերում է իշխել։ Նա միայն նշում է, որ Գուրգեն Ապուպելճի նստոցն էր Ռշտունյաց ոստանը[47]։ Մեկ այլ առիթով պատմիչը նշում է, որ Գուրգեն Ապուպելճը հետագայում ևս ձգտում էր տիրանալ Ռշտունիքին, հատկապես Ոստանին, «որ էր տեղի սպանման հօր իւրոյ, զինս արեան զնա համարելով»[48]։

---

43 J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, S. 327.

44 Թովմա Արծրունի, էջ 330, 377։

45 Մմմտ. G. Weil, Geschichte der Chalifen, B. II, Mannheim, 1848, S. 362; J. Laurent, L'Armenie entre Byzance et l'islam, p. 215.

46 Թովմա Արծրունի, էջ 322—323։

47 Նույն տեղում, էջ 323։

48 Նույն տեղում, էջ 377։ Ն. Ադոնցը ենթադրում է, որ Գուրգենը Մարդպետների տոհմից

Գուրգեն Ապուպելճի ու Գրիգորի դաշինքը մեծապես անհանգստացրեց թե՛ խալիֆային և թե՛ Վասպուրականի գերեվարված իշխաններին։ Չնայած Գուրգեն Ապուպելճը ճանաչել էր Բուղայի գերիշխանությունը, խալիֆայի համար պարզ էր, որ նա հարմար պարագայում կհարեր Բյուզանդիային։ Այդ էր պատճառը, որ Դրիգոր Արծրունու մահվանից հետո, երբ Գուրգեն Ապուպելճը վերստին միայնակ էր տիրում Վասպուրականին, Արմինիայի նոր ոստիկան Մահամմադ Շայբանիի դրդումով Գուրգեն Ապուպելճի դեմ պատերազմ սկսեցին Վասակ Կովակերը և նրա եղբայր Վահանը։ Սրանց Թովմա Արծրունին հիշատակում է որպես Արծրունյաց տոհմի երկրորդական ճյուղերից մեկի նահապետ Աշոտ Արծրունու որդիներ։ Վահանին ու իր եղբորը գործակցում էին նաև Ամատունիները։ Սակայն նրանք պարտվեցին և Վահանը վերադարձավ Սամառա՝ հորը և ուրիշներին զեկուցելու կատարվածի մասին[49]։

858 թ. գերությունից վերադարձավ Վասպուրականի Արծրունյաց իշխող ճյուղի անդամներից Դերենիկը, որը ըստ Թովմա Արծրունու՝ «էր ամաց իբրև տասանց»[50]։ Սակայն վերլուծելով պատմիչի տվյալները, տեսնում ենք, որ Դերենիկը 2—3 տարով մեծ է եղել։ Ըստ Թովմա Արծրունու, հայոց իշխանների գերությունը կատարվել է 852 թ., քանի որ նա նրանց գերության վեցերորդ տարին համարում է հայոց ՅԶ (306), այսինքն՝ 857 թ. կամ Հայոց կաթողիկոս Զաքարիա Զագեցու (855—876) աթոռակալելու երրորդ տարին[51]։ Գերությունից իշխանների վերադարձը սկսվել է նրանց գերության յոթերորդ տարում, այսինքն 858 թ.[52]։ Երբ սպանվեց Դերենիկը, «էր ամաց Խ» (40)[53], իսկ Դերենիկը սպանվել է 885 կամ 886 թթ., ինչպես երևում է նույն պատմիչի ուրիշ վկայություններից։ Ուստի 40 տարի ետ գնալով, կստանանք 845 կամ 846 թթ.։ Հետևաբար՝ 858 թ. Դերենիկը ոչ թե 10, այլ 12—13 տարեկան էր։

Դերենիկն, անշուշտ, չէր կարող իշխանությունը խլել Գուրգեն Ապուպելճից, ուստի հաջորդ տարի Վասպուրական ուղարկվեց նրա հորեղբայր Գուրգենը, որը պետք է պաշտպաներ Դերենիկին՝ ընդդեմ Գուրգեն Ապուպելճի։ Սակայն տեղի ունեցավ հակառակը։ Դերենիկի հորեղբայրն ինքը ջանաց տիրանալ Վասպուրականի իշխանությանը։ Չկարողանալով հասնել դրան, նա Գուրգեն Ապուպելճին առաջարկեց Վասպուրականը բաժանել միմյանց միջև։ Սակայն Գուրգեն Ապուպելճը հրաժարվեց այդ անելուց երկու պատճառով. նա նախ գիտեր, որ այդպիսով դեմ է գնալու Վասպուրականի օրինական տերերին, ինչպես և նրանց հովանավորող խալիֆային ու Վասպուրականի ազատանուն։ Մյուս կողմից՝ նա չէր հավատում նաև Գուրգենին, հիշելով նրա հոր վերաբերմունքն իր հոր հանդեպ։ Ուստի Գուրգեն Ապուպել-

---

էր, քանի որ նրա բուն բաժինն էր Մարդաստանը (Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 74—75)։ Ըստ երևույթին լրացուցիչ կովանների առկայության դեպքում թերևս հնարավոր լինի ապացուցել, որ Գուրգեն Ապուպելճը Ռշտունիների շառավիղներից էր։

49 Թովմա Արծրունի, էջ 323—324։

50 Նույն տեղում, էջ 328։

51 Նույն տեղում, էջ 326։

52 Նույն տեղում, էջ 327—328։

53 Նույն տեղում, էջ 367։

ը հրաժարվեց Վասպուրականի իշխանությունից, այն թողնելով ժամանակի իրավիճակամամբ օրինական տերերին։

Այսպիսով, IX դ. կեսերին, չնայած Բուղայի հրոսակների ասպատակություններին, հնարավոր եղավ վերականգնել Վասպուրականի իշխանությունը, մինչև նրա օրինական տերերի վերադարձը։ Այդ իշխանությունը ճանաչվեց Արմինիայի ոստիկանի և խալիֆայի կողմից՝ մեծապես նպաստելով հետագայում ամբողջ Հայաստանի անկախության վերականգնմանը։

ВАСПУРАКАНСКОЕ КНЯЖЕСТВО В 850-ых ГОДАХ

В. М. ВАРДАНЯН

Резюме

В 851 г., после захвата Армении войсками халифата, князья Васпуракана, сохранив военные силы, продолжали борьбу за свои права и независимость. Эта борьба увенчалась успехом, когда ее возглавил представитель второстепенной ветви Арцрунидов Гурген Апупелч. Халифат в лице полководца Буги вынужден был признать княжество Гургена Апупелча, ибо преследовал цель ослабить провизантийские силы Васпуракана и перетянуть их на сторону халифата. Впоследствии Васпураканское княжество имело большое значение для восстановления независимость всей Армении.